The only Advertising Agency for Persia and the Caucasus.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
№ 20
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում . . . 20 դրան
Գաւառներում . . . 25 դրան

ԱՐՏԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . 4 ռբ. 50 կ.
Թուրքիա . . . 50 գրուշ
Եւրոպա . . . 12 ֆրանգ
Ամերիկա . . . 2,50 տոլ.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողը 20 շահի
Հետագայ „ „ 10 „
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐ 8 ՇԱՀԻ

խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal arménien „MITK"
Adresse télégraphique-Tauris „MITK"

ՄԻՏՔ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ادارهٔ روزنامهٔ مبطق

Anzeigeblatt fuer Persien

MITK

Propriétaire & Editeur en chef
Al. Der-Vartanian
Le Gérant
Mihran Baghdassarian

TERMS OF SUBSCRIPTON
for a year payable in advance. 20 krans.
Foreign Dollars 2. 50
RATES OF ADVERTISEMENTS:
one printing line on the 1-st page 10 cen.
„ „ „ „ „ 4-th „ 5 „
15% discount for annual subscription paid in advance. Address
The „MITK" Publication Co.
Tabriz, Persia

Published by the „MITK" Publication Co. and Advertising Agency, Tabriz, Persia

Բ. ՏԱՐԻ № 20 ԹԱՒՐԻԶ, ՇԱԲԱԹ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1913 Թ. Tauris, Samedi le 10 Janvier 1914 № 20 Vol. II

ԲԱՑՈՒԱԾ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄՆ Է

„ՄԻՏՔ"-Ի

1914 Թ-Ի Գ. ՏԱՐՈՒԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեկտ. 31 գիշերը, իրիրշաբթի լոյս չորեքշաբթի Նոր-Տարու երեկոյթ և

ՏՕՆԱԾԱՌ

ԵՐԵՔՇԱՆ ԴԳՐՈՅԹՈՒՄ ԵՒ ՑՕԳՈՒՏ ՆՈՒՅՆ ԴԳՐՈՅԹԻ

Սկիզբն է ճիշտ ժամը 8-ին։

Ուզում է ձայն Միսյոնութեան ժամերին լուա խօսակից ընկեր

ծխեցէք միայն

Եղբարք **ՍԷՅԼԱՆՈՎՆԵՐԻ** ծխական գործարանի

ԵԳԻՊԵՏԱԿԻՍ, ԻՐԻՍ, ՓԱՐՈՍ, ՊՐԻՄԱ, ԱՐԻՕԼ և ՄԱՐՍ

պապիրոսները.

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՈՒՄ

ԳԱՐԱԳԱՅՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Գարագայն հայրենիքի համար Նոր-Տարեմուտը ինչպիսի՞ զգացմունքներ է ներշնչում։ Ինչպիսի՞ զգացմունքներ է ներշնչում Նոր-Տարեմուտը Գարագայն հայրենիքի համար։

լով ու տրորելով մեր ճամպին՝ թոյլերին և նրանց արդար իրաւունքը.

Անարդարութիւն, իրաւազրկութիւն, պարտադրանցութիւն, ընդունուած սովորոյթների ոտնահարում, կեղծիքներ և անվերջ կրկնութիւններ ու մեղաչումներ... Ահա մեր ողջ գործն ու կեանքը անցնող տարուայ ընթացքում։ Էլ ինչպէս, ուրեմն, ուրախանանք որ Նոր-Տարի է գալիս, երբ մեր մէջ մնացել է նոյն հասպաշտ, անարդար, իրաւազրկուած և ճշմարտահալած հին ու անուղղայ մարդը, որ ոչինչ նորոգութիւն, ոչինչ լոյս ու կեանք չի սիրում։ Նա սիրում և ընդունում է միայն երկրպագութիւն, թծնանք, փարիսեցիութիւն, վտարանութիւններ կեղծիքի, և բնաւ երբէք, քննադատութիւն։

Այո, այսպէս ենք մենք բոլորս։ Այո, այսքան երկրային, նիւթապաշտական և հեթանոսական է մեր հոգին, կենցաղը և գործունէութիւնը։ Միայն հաց և շահ, կամ շահ և հաց, առանց գոնէ փոքր ինչ մտաւորական, հոգեկան, և հասարակական պահանջների ծարաւի բարարման կամ յագեցման։

Եւ որ Նոր-Տարին այլ ևս կժպտայ այդպիսի մի կոպտօրէն նիւթապաշ համայնքի։ Բայց մենք այդպէս պիտի չմնայինք։ Մեզ պէտք էր ներքին աշխարհի, ներքին մարդու մի հիմնական բարեփոխութիւն, վերածնունդ, որ ամեն տեղ, ամեն մի հեղուեւուութեան տակ՝ դուրս գայինք բաց ճակատ, համարձակ և անխղճահար։

Ո՞վ պէտք անել կամ անէր այդ բարեփոխումը։

—Ուռաջնորդը, եկեղեցին, դպրոցը, մամուլը հասարակութեան պարապմունքն և իսկական երիտասարդութիւնը, ինտելիգենցիան...

Ուրախ, այդ ամենքը կան միայն անուններով։ Գործ ու կենդանութիւն բնաւ չկայ մէջտեղում։ Այս հասկանալի պատճառով՝ մեր տոկուն, ընդունակ, նոր հորիզոններ փնտրող և բաց ժողովուրդը խաւարի ու խարխափանքի մէջ է։

Առաջնորդ՝ ձիգ ամիսներով լուռ, անքարոզ, իր Մեծ Վարդապետի Սիրոյ, յաւիտենական ու անմահ գաղափարների ժողովրդականացումից ու որոտաբանութիւնից հեռի և անկրակ։ Եկեղեցին՝ ամուլ, անկենդան և պակուած անկոչում պաշտօնեաներով։ Ժողովրդական ներկայացուցչութիւն՝ անդիտակ, հասպէր, աչառու և նեժարապաշտ։ Դպրոց՝ անբաւարար, երևակայող և անիդէայ սերնդով, զուրկ դիսցիպլինայից ան-ոգի։ Հասարակութիւն՝ հեռի իսպառ ամէն ազգային ու հասարակական գործերից և շնչասպառ վազող՝ միայն ու միայն շահի եսեւից։ Երիտասարդութիւն՝.. Ո՜հ... Նա աւելի ծեր ու հաշմանդամ է քան մեր բուն ծերերը։ Գեռ փառք վերջիններիս, որ իրենց անուսում տեղով շատ բան են արել դրպրոցների ու մեր հասարակութեան և հէնց նոյն այդ ինքնագով ու անամէջ «երիտասարդների» համար, որոնք հէնց այդ ծերերի ստեղծած փոդերով են քիչ թէ շատ մարդ դարձել. բայց և որոնք ոչինչ օգուտ չունին մեր հասարակութեան համար, զի սրանք աւելի շահամոլներ են, քան մեր Զիմզիմովները։ Վաճառականութիւն՝ (սակաւ բացառութեամբ) մէկ տուող՝ հազար տնքացող, միննաթ բարձող և հազար դժգոհող։ Ո՞ր մէկը մեր մեծ վաճառականներից կարող է ասել, որ ինքնաբերաբար կամ թէ կուզ յիշեցումն ստանալուց յետոյ, սրբել է երկու չքաւորի արտասուք և հագցրել երկու մերկի ու որբի։ Գոնէ մենք չգիտենք։

Ինտելիգենցիա...??

Ահա, այսքան դատարկ, այսպէս անհրաժեշտ է մեր կեանքը։ Կայ մէջտեղում մեր ճահճացած կեանքը ախտահանող միայն մամուլի միակ շաբաթաթերթ օրգանը—«Միտք» ը-որին, սակայն, խեղդել է ուզում հայկական չկամութիւնը. բոլոր նրանք, ովքեր չեն սիրում վարագոյրների ետևից դուրս գալ, որոնք չեն ուզում որ մենք նրանց բոզաղերծ անենք։ Սակայն մենք, անհրկիզ և անվերապահ, որպէս անապատում կոչողը, ձայնում ենք զօրեղ զոչիւնով՝

Թողնենք այլևս հին, նիւթապաշտ և եսասէր մարդը, որ ցարդ իշխում էր մեր մէջ։ Մի փոքր էլ ձգտենք դէպի բարին, դէպի մտաւորականը։

Նորոգենք մեզ և ներշնչուենք ազնիւ ու մարդասէր զգացումներով, որպէս զի այսուհետև գարուն բուրէ մեզանում կեանքը, որպէս զի ոչինչ թշնամանք ու չարութիւն չզգանք ոչ ոքի դէմ, որպէս զի գիտանանք արժանը հատուցանել և՛ բարեկամին, և՛ գաղափարական հակառակորդին։

Տանք մեզ անդրժելի խոստում՝ լինելու այդպիսի փերանորոգուած մարդիկ։ Այս դէպքում միայն մեզ ուրախ կողջունէ իրաքանչիւր Նոր-Տարի։

Թող, ուրեմն, ներկայ Նոր-Տարին լինի սկիզբը այդպիսի Նոր-Տարիների, սկիզբը նոր ժամանակաշրջանի։

Ա. Տ. Վ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԼՈՒՐԵՐ

—

Մինիստրական խորհրդի կողմից որոշուել էր Սաֆար ամսի սկզբից (Դեկա.11-ից) ընտրութիւններ կատարուէին։ Բայց այդ որոշման՝ Շաւվալ ամսում կոչուած անջիւման Նիւզարը՝ ներքին գործոց մինիստրութիւնից հրաւիրուելով՝ նիստ էր գումարել Դար-ալ-Հըքումում։ Անդամներն են՝ Ազա Մօթամն ալ-Մուլք, Հաճի Զէյն Ալի Նարի, Հաճի Սէյիդ Նասրը-ալ-լահ Սադաթ Ախոյի, Ազա Միրզա Մահմուտ Սպահանի, Ազա Միրզա Մոհամմադ Սադէղ Թէբրիզլի, Հաճի Մոհամմադ Նաղի Շահրուխի, Ազա Միրզա Հաճի Ազա Հաբիբիզրուշ։

Սոյն ընտրութիւնների կատարման համար գանձարանից յատկացուած է 1200 թուման։

◆ Ներքին գործոց նախարարութեան պաշտօնեաները առաջիկ չստանալու պատճառաւ գործադուլ էին արել։ Որոշուած է երկու ամիս ժամանակ, որ վճարեն։

◆ Մօտ 6 ամիս պատերազմական նախարարութեան պաշտօնեաները իրենց առաջիկը ստացած չթիթեղու պատճառով՝ գործադուլ էին արել։ Կարգադրուած է առայժմ 3 ամսուանը վճարել։

◆ Թէհրանի փողոցներում և թաղարներում 100-ներով մերկ ու անօթի թափառող տղաների համար, որոնք բազարներում շների հետ ընկերանալով, անգամ ցուրտ ու ձմրանը մինչև լոյս հսկում են խանութների վրայ, Սփահդար Ազամը իր ծախսով հիմնել է մի որբանոց, ուր առ այժմ պահւում են 200 հոգի, որոնք և Ս. Ազամի անձնական միջոցներից ստանում են սնունդ, զգեստ և այլն։

Ծ. Խ. Մեր հարուստները գոնէ 1-2 հոգի նման հայ տղաներ չեն կարող որդեգրել ու պահել։

◆ Զարմանալի ստեղծուած

Համադանից ներքին գործոց նախարարին հաղորդում են, որ այնտեղ Ղազալան թաղում մի պարսիկ կին լոյս է ընդել և ծնել է մի երեխայ, տափակ ու երկարաւուն (գրքի նման երեսով և երկու եղջիւրներ գլխին։ Այդ տարօրինակ ծնեալը չի սնեցել ոչ արական և ոչ էլ իգական սեռանդամ։ Ծնուդից յետոյ մեռնում են թէ՛ երեխան և թէ՛ մայրը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՎԱՃԱՌԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՒԵՐԻՑ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱՆՁԻՑ։

—

«Միտք» ի միշտ յափշտակութեամբ կարդացող խմբագրականներից՝ մանաւանդ №-17 ի միշտ յիշելիք և ուշագրաւ խմբագրականը, «Նոր-Մրցակիցներ» վերնագրով, հարկադրում է ինձ գրել նոյ մեռնող վաճառականութեան մասին այս կարևոր տողերը։

Ինչու է մեռնում Թաւրիզի հայ վաճառականութիւնը։ Ինչու գործունէութեան կարճատև կեանք են ունենում հայ վաճառականները։

--Հայ մարդու և մանաւանդ հայկական տիպի վաճառականների պատմական սեւ նախանձի, չկամութեան, իրար ոտքի տակ փորելու և իրար անվերջ վարկաբեկելու շնորհիւ։ Հասարակ լեզուով ասած՝ վաճառականների իրար դէմ ոտ պահելու պատճառով։

Ահա պարզ ու գլխաւոր պատճառը տեղիս հայ վաճառականութեան առաջ չգնալու, մեռնելու և շուկան ու ասպարէզը ուրիշին կամ օտարներին թողնելու մասին։

Հայ վաճառականը ամբողջ աշխարհն իր արտադրութիւններով՝ իր նեղ եսի, իր իսկ սոսկ շահի համար ստեղծուած է համարում։ Ուրեմն երբ մի այլ մէկը իր կողքին երևան է գալիս՝ նոյնպէս ապրելու, շահելու, տուն ընտանիք պահելու համար, նա այդ տանել և դրա հետ հաշտուել չի հանդուրժում։ Զէ՛ որ նորը երևան գալով՝ խլում է իր բաժինը։ Ասել է պէտք է չթողնել։ Գէտք է ուտել, կործանել միւսին, որ աշխարհն այլևս իրեն նեղ չդայ, ուրիշի գրպանը բան չլցուի։ Այս հոգեբանութեամբ, ուրեմն, հայ վաճառականը սովորել է իր նմանին և մանաւանդ իրենից փոքրին վնասել թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս—Շահ է՝ իմս պէտք է լինի, կալուածք է՝ իմս պէտք է լինի. դիրք ու ասպարէզ է՝ միայն ու միայն իմս պէտք է լինի, ասում ու հաւատում է այդ առասպելին արծաթասէր ու ու չարանախանձ հայը։ Այժմ դուք տեսէ՛ք՝ ինչ կործանարար դեր է կատարում նախանձ հայի, արծաթասէր հայի միտ ու արիւն դառած այդ հաւատամքը։

Ենթադրենք մի այլ հայ վաճառական, շնորհիւ իւր ճարպիկութեան, առաջ է գնում։ Միւսներն աշխատում են նորան կամ այդպիսիներին—սեղանաւորների, տեղական բանկերի, Ռուսաց ֆիրմաների առաջ վարկաբեկել և անվստահելի ցոյց տալ, կամ նորանց խոստացած ապրանքն ու ներկայացուցչութիւնը խլել՝ իրենց ձեռքը քցել։

Հայ վաճառականները երբէք չեն ցանկանում, որ երէկուայ փոքր վաճառականը առաջանայ, նոյնպէս դրամի ու դիրքի դէր դառնայ։ Եւ այդպիսի չկամութեան երեսից փոքր վաճառականը ոչ միայն չի առաջդիմում, այլ վնասում է ասպարիզից։

Ասացէ՛ք, խնդրեմ, ինչ եղան մեր մեծ՝ հայ ֆիրմերը՝ «Սևան», «Արաքս», «Արամեան» և այլ ընկերութիւններն։ Ի՞նչ եղան նոր ասպարէզ դուրս եկած երիտասարդ կամ ճարպիկ առևտրականները։—Նրանք մեռան և կործանուեցան իրար դէմ ունեցած անվստահութեան, իրարուց գողանալու, չնայած համաբաժին ընկերներ էին, և հայի սև նախանձի պատճառով։ Նորը, սկսնակը, դեռ կեանք չառած՝ խեղդւում է մեծերի, հզօրների և չկամների լարած ստորերկրեայ թակարդների շնորհիւ։ Մինչդեռ հակառակը պէտք էր լինէր։ Երբ մի վաճառական նիւթապէս վնասւում, ճգնաժամերի է մատնւում, կարողները, մեծերը նրան օգնութեան չեն շտապում։ Դեռ չօգնելու փոխարէն, ընդհակառակը մի քացի էլ խփում ցեխի մէջ են կոխում։—Չեն օգնում, որ մի գուցէ վնասուողը յանկարծ ոտքի կանգնի և կրկին առևտրական ասպարէզին տիրելով՝ նորէն իրենց շարքն ընկնի և իրենց «հացը կտրի»։

Վերջ այդ չար և սև նախանձին, պարոնայք, հայ վաճառականներ։ Ժամանակ է իրար օգնելու և ստեղծելու մի կոմպակտ և հզօր հայ վաճառականութիւն։ Նայէ՛ք մի ձեր շուրջը։ Մինչդեռ դուք կուրաբար իրար վնասում էք, ձեր շուրջը արդէն բազմանում և զօրանում են օտարները, եկուորները, որոնք շատով ձեզ անմիաբաններիդ դուրս կփոնդեն ասպարէզից։ Արթնցէ՛ք, միացման և մեծ ընկերութիւնների հիմքերը դրէ՛ք, ինչպէս խմբագիր. պ. Ա. Տ. Վարդանեանը նախօրօք՝ իւր «Միտք» թերթի №-17-ի առաջնորդողով այդ շատ ի դէպ՝ սովորեցնում է ձեզ և հնչեցնում ձեր ականջին։

Ժամանակ է, հայ վաճառականներ՝ աջակցելու իրար, պահելու և բարձրացնելու ձեզնից փոքրերին։ Վերջապէս՝ օրրինակ վերցրէ՛ք մեր հարևան թուրքերից։ Տեսէ՛ք ինչպէս նրանք հաւաքւում, օգնում, շուտ հաշիւները մաքրում և նորէն ոտքի են հանում մէկին, եթէ նա սնանկացել էր։ Սակայն մեզանում տասնեակներով կարելի է մատնանշել երէկի մեծ ու փոքր և սնանկացած վաճառականների, որոնց հաշիւները թերևս 10 տարուց աւելի է, որ չի մաքրւում։ Մինչդեռ այդ հաշիւների մաքրումը, սնանկացածին ոտքի հանելը, ամենաշատը, մի ամսուայ գործ է։ Սակայն մարդիկ այդ չեն անում և մէկը միւսի ետևից մեռնում են պատուաւոր ընտանիքներ պահող և 10-եակներ կերակրող հայ վաճառականներ։ Չեն անում միայն չկամութեան և սև նախանձի պատճառով, առանց խղճալու նրանց սիրասուն կին ու զաւակներին, որ այսօր, գրեթէ, մուրացիկ են։ Ամօթ։

Այսքան դժբաղդութիւններից, հալածանքներից, ապա և այսքան կրթութիւնից յետոյ՝ պէտք ու անհրաժեշտ է, որ մենք մի անգամ ընդմիշտ թաղենք մեր հայկական պատմական սեւ նախանձը։ Աշխարհը լոյն համարենք ամենքի համար և թողնենք, որ ամենքը ազատ ու ազնիւ կերպով աշխատեն։ Օգնենք իրար։ Քաջալերենք ամեն ազնիւ աշխատանք և ամեն մի բարի ու կուլտուրական ձեռնարկ։ Քանի ուշ չէ և քանի դեռ մենք չենք դարձել օտարների ըստրուկները։ լսենք մամուլի զօրեղ ձայնը

թափ տանք մեզանից ուտող-կրծող նախանձի ու չկամութեան վատ ու թունալից սերմերը, և թող՝ ահա վրահաս Նոր-Տարու հետ գանանք նոր մարդիկ, նոր հոգիներ, սրտաբաց և պչակիչ ոմենքին և ամեն գործում։

Բարեկամ։

ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ԲԱՐԵՐ

(Իրական կեանք Թաւրիզում)

—

Մօտ օրերում կարճատես մի պարոն, որ սովորած է յաճախ գիշերները աչ վերադառնալ տուն, կարիք է զգում գրպանում փոքրիկ ելեքտրական ճրագ ունենալու, որպէս զի ապառուի մեր փողոցներում, մանաւանդ մութ գիշերներին, անցորդի գլխից անպակաս փորձանք անակնկալներից։

Այդ նպատակով նա իրեն ընկերակցող օրիորդի հետ մանում է համեմատած այլ մագազինների հետ՝ մեծ քանակութեամբ նման ճրագներ վաճառող «ազատամիտ» կոչեցեալ մի հայ «յաւազանէ միայն քրիստոնեայ» պարոնի մագազինը և խնդրում է այն, ինչ որ իրեն պէտք էր։

Պարսկական մէկ թուման դրամով գնում է մի փոքրիկ ելեքտրական ճրագ ա. խանութից դուրս գալիս։

Ճանապարհին պարոնը նկատում է որ անդրադարձնող ապակու տակ փոքրիկ ելեքտրական ճրագը չկայ ու ցոյց է տալիս օրիորդին։ Վերջինս տալիս է ընկերոջը իւր ճրագը ու վերադառնում են վաճառողի մօտ

Անխիղճ վաճառականը նախ պնդում էր՝ որ պարոնի ձեռքում եղած վարուող ճրագն է իրենից գնուածը, սակայն քիչ լեսոյ երբ տեսնում է, որ այդ կեղծիքը գիմացիններին կլլեցնելը անհնարին է, առարկում է թէ՝ «Այդ արժէքով ես քեզ աւելի լաւ ճրագ չէի կարող վաճառել և երբ դու սակարկում էիր ու ես համաձայնուեցի, պէտք է գիտնայիր, որ մէկ թումանով քեզ աւելի լաւ ճրագ չէի տալ»։

Գնողը զարմացած պատասխանում է թէ ինչ հարկաւոր էր իրեն այն ճրագը, որ չպիտի վառուէր և խնդրում է լեռ վերցնել ապրանքը։

— Ոչ, պատասխանում է վաճառողը, խանութից դուրս եկած ապրանքը լեռ չի վերցնում։

Երիտասարդը անիծելով իւր կարճատեսութիւնը առաջարկում է այդ դէպքում վերցնել և ճրագը, և՝ փողը ու հեռանում է։

Վաճառականը նրա ետևից փողոցն է շպրտում անպէտք ճրագը ու կլլում դրամները։ Պատմում են, որ նոյն փողոց շպրտուած ճրագը նոյն մագազինում տեսել են յետոյ։

Ահա Ձեզ մի դէպք ընթերցող, որ հարց է ծնեցնում իւրաքանչիւր բանական մարդու մէջ, վաճառականութիւն՝ թէ կողոպուտ, շահ թէ՝ աւազակութիւն, օրը ցերեկով շահատան Թաւրիզում։

Այո, մեր օրերում այսպիսի դէպքեր տեղի են ունենում և զարմանալի չէ, որովհետև դարուս մթնոլորտը այնչափ ապականուած է ինչ կերպով էլ որ լինի փող և անպայման շատ փող շահելու ձգտումով, որ նոյն իսկ «ուսուցիչ» յորջորջող մէկը գրքի վրայ տպուած 15 կոպէկի ա. թուանշանը 4 է շինում և 15 կոպէկանոց գիրքը 45 կոպէկով վաճառում։ Մի ուրիշն էլ միջնորդից գնած և մի ամբողջ մի ամիս էլ իր հագած կոշիկը առանց կարմբելու, 25 զոսոնով վաճառում է նորաւարտ ու նորեկ իւր ընկերոջը, էլ ինչ պահանջենք վաճառականից։

Բայց համեմատենք։

10-15 օր առաջ ճաշին ցանկացայ նուռ ուտել ու մտնելով ծանօթ թուրք նպարավաճառի խանութը, անձամբ իմ ձեռքով 3 նուռ ընտրեցի ու տուն տարայ։ Նուռերից երկուսը բոլորովին փչացած էին։

Ցաջորդ օրը երբ նոյն նպարավաճառին ասացի, որ փչացած էին նուռերից երկուսը, խեղճը իրեն շատ վատ զգաց ու խնդրեց որ ես երկու նուռերը վերցառանց վճարելու։

Ես չհամաձայնուեցի, սակայն թուրքը այնչափ իրեն վատ զգաց ու այնչափ ազաչեց, մինչև որ ես մէկ նուռ վերցրի նրան չվիրաւորելու համար։

Համեմատեցէք ընթերցող, և եզրակացրէք։ Մէկը տգէտ, բայց ազնիւ թուրք միւսը դպրոցական, կուրսական բայց, զազիր ու չարչի հայ։

Այլ դարք, այլ բարք, թէ
Այլ արք և այլ բարք։

Լեւոն

ԳՐԱԿԱՆ

ՆՈՐ—ՏԱՐԻ

Ինչո՞ւ համար նորից եկար,
Եւ չբերիր մեզ բարի.
Մոռուած օրից մինչ օրս էլ,
Մառնուած ենք մենք չարի։

—

Մեզ խեղճերիս համար չկայ,
Ուրախութիւն ու բարի.
Հարուստներն են որ կկուչեն,
—Շնորհաւոր Նոր-Տարի։

—

Ուրախ եղէք, ո՛վ հարուստներ,
Խնճոյքներում ու քէֆում.
Ի՞նչ է անում դա ձեզ հոգ չէ,
Խեղճ աղքատը իւր տնում։

—

Հարցրել էք դէթ մի անգամ,
Խեղճ ու կրակ աղքատից,
Ի՞նչ է անում, ի՞նչպէս ապրում,
Դողացողը ձիւն ցրտից։

—

Ուրախ սրտով, ո՛վ հարուստներ,
Սպասել էք Նոր-Տարուն,
Երկու ձեռքով յափշտակել,
Նրա բերած ճոխ բարուն։

—

Գթոտ եղէք, դո՛ւք հարուստներ,
Խեղճ աղքատի դառն լացին.
Բարի եղէք նրանց տալու,
Գէթ կարը սև չոր հացին։

—

Որ նրանք էլ գալով տօնին,
Յուրտ ու քաղցից ազատուած,
Լի ու ուրախ սրտով կուչեն,
Երկո՛ր կեանք տայ ձեզ Աստուած։

Գ.—Ն.

23 Դեկտեմբեր 1913 թ.
Թաւրիզ

ԳԱՒԱՌ

Նոյեմբեր 28. Սուլդուզ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԸ

(Սեփ. թղթակցից)

Գաւառակիս թրքախօս հայերը, որք ցրուած են 7—8 գիւղերու մէջ խառն ընդ թուրքս, քուրդս, հրէաս և ասորիս, ունին մէկ դպրոց ի Նաղադէ գեղջ՝ կառուցուած սակէ հինգ տարի առաջ Ջանիւք հանգ. Վահրամ սարկաւագ Վանեցւոյ և արդեամբ ժողովրդեան։

Դպրոցն այս տարի վերսկսեր է իրեն բացումը հոկտ.-ին և ցարդ ունի 25-30 աշակերտ, որոնց թիւը գամ քան զգամ բարձրանալու վրայ է, զի տակաւին տղայք դաշտային աշխատանքէն չեն պրծեր։ Ուսուցիչ պ. Յովհաննէս Վարդանեանը, որ երկար ու ձիգ տարիներ նուիրած է իրեն ազգի բարոյական և մտաւոր անդաստանի դժուարին և պատասխանատու գործին՝ պաշտօնավարելով ի շրջանս Ուրմիոյ, ի Սալմաստ և ի Մուժամբար, ձեռք բերած է բաւականին փորձառութիւն և ամրողջ սրտով կպած է այդ արհեստին։ Ես քանի անգամ բաղդ ունեցայ այցելելու դպրոցը և ներկայ գտնուելու դասախօսութեանը. լաւ տպաւորութիւն թողեց անոր դիւրաւոյց եղանակը։ Անկասկած աւելի արդիւնաւոր կըլլար պարոնի թափած ջանքն ու ճիգը, եթէ աշակերտաց բաժանմունքներն երկուսէն անդին չանցնէին։

Դպրոցն այս տարի իրեն գոյութիւնը կպարտի Ղևոնդ աբեղայ Գասպարեանին (այժմ վանահայր Թադէոս առաքելոյ վանուց), որ այդ նպատակաւ կրցաւ նպաստ ստանալ Սօվուջբուլաղի դատաւորէն և Քարգոռգարէն (տկանչը կանչէ մեր ուներևոլներուն)։ Իսկ թէ եկող տարի այս միակ կրթական հաստատութիւնը, որ հանդերձեալ է սնունդ մատակարարելու հայութեան այս խորթացած և արգահատելի մասաղ սրերոյն պիտի պահէ պահպանէ՞ իր կեանքը. թէ «Հոգւոցն հանգուցելոց»ի պիտի դատապարտուի ..

Մենք, սակայն, սիրում ենք յուսալ որ թեմի առաջնորդ Հայր Մելիք-Թանգեանը, հարկ եղած միջոցներն ի գործ կդնէ և փակման վտանգը միանգամ ընդ միշտ կվերացնէ։

Զ. Հ. Ա.

Դեկտ. 14 Միանգամ.

ԿԵՆՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԸ

(Սեփ. թղթակցից)

Շնորհիւ զարնանային տեղատարափ անձրևների՝ այս կողմերի հունձը սպառածից աւելին եղաւ։ Ցորենի խալվարը (40 փութ), որ կալի վրայ դժուարաւ կարելի էր առնել 20 թուման, այժմ ծախուում է 17-ով, իսկ գարու գինը բաւական բարձրացել է և գնահատուում է 13-14 թուման։

Այսքան աժանութիւնը պիտի վերագրել այն քանին, որ ըստ նախորդ տարիների՝ այս տարի գանգաղ է արտահանուում Թաւրիզ և Ուրմի այդ միակ սպառող վայրերը։

Որիգին (չալթուկ) խօ երբէք խօսք չի կարելի ասել. այնքան տատ է այս Ք.—խանում, որ՝ դեռ ևս հօլայից (անասունների ոտներով արորել – ծեծելու գործողութիւնը) չեն լմնցել։ Սակայն հակառակ դրան, արժէքը հետզհետէ բարձրանում է և խալվարն արժէ հիմի 30 թուման։ Այսքան թանգութեան պատճառն այն է, որ Սօուջբուլաղում և Սուլդուզում չալթուկը սակաւ է եղել, որակով ևս աչքի չի զարնում։

Ալիւրի լիտրն էլ (16 գրուանքա) տատանուում է 2 դրան և 2 դրան 4 շահու վրայ։

Ա. Խ. Մ.

ՀԵՌՆ ԴՈՒՐՍԻՑ

—

19 Դեկտ. Մարաղա

«Բաղտակրթութեան» մուտքը Մարաղա

(Սեփ. թղթակցից)

Նորութի՞ւն

Նահապետական, անփոփոխ և հնութիւնից պոկ չեկող անշարժ Մարաղան ևս «քաղաքակրթուեց»։ Եւ նրան «քաղաքակրթելու» այդ «մեծ պատիւը» պատկանում է մի վատ հալի։

Այդ վատահոգի պարոնը ահա 3-4 տարի է, ինչ սոսկալի ազքատութեան, թշուառութեան շէմքից իջել է մոլի թղթախաղի ասպարէզը, և՝ զանազան մութ ու կեղտոտ միջոցներով վաստակել է «բարի» անուն և դիզել, ասում են, 3-4000 թմն-արեան, արտասուքի և անէծքի փող։

Այս վատի լարած ցանցերից որքան մարդիկ և ընտանիքներ են հասել լեռին դժբաղդութեան, որքան բերաններ են անէծքներով բացում այս անաքանդի դէմ... Բայց նրա ինչ հոգը։ Այսօր նրա վէգը ալչու է կանգնում։ Զբաւականանալով իր սրած այդքան անաքանդութեամբ և հաւաքած փողերով։ Նա մտածել է էլ աւելի հարստանալ։ Թէ ինչ միջոցով, այդ հարց չէ։ Ինչպէս այլ բիւրաւորների, այնպէս և մեր այս Մարաղայի «Սաքլի» համար՝ սուրբ են բոլոր այն ճանապարհները, որոնք տանում են դէպի ոսկու գիզումը։ «Ցիմարներն» ու «իդէալիստներն» են միայն մտածում հալալ վաստակով և ազնիւ միջոցներով հաց աշխատել և տարին 12 ամիս էլ քաղցած մնալ։ Սա հօ «ցիմար» չէ։ միջոց որն է։—Արա՛ ամեն ինչ, միայն թէ փող շահիր, որ «պատիւ ու գիրք» ունենաս, ասում է փողագիզութեան հոգերանութիւնը։ Եւ անում է Մարաղի ճարտիկ «հերոս» նոյնը։ Եւ ահա նա բացում է կոյս Մարաղում խայտառակ մի անառականոց, ուր գիտէ որ կվազեն ամենքը, և կվճարեն լաւ՝ այդ վարպետին։ Ո՛չ գրպանն է ծակում որ։ Սա էլ իր կարգին մի փէշակ է էլի։ Մէկը վաճառականութիւն է անում, միւսը՝ ներկարարութիւն, մեր «հերոսն» էլ զբաղւում է էկանանց տուեստրով։ Ինչ մեղք։ Մթթէ անպատիւ փէշակ է։ Ապահով է մարդը, որ վաղը միւս օր կհարստանայ և այլոց պէս կկուչուի, օրինակ, «Ագա Սաք» և ամենքը դեռ նրան պատիւ կանեն, գլխարկ կվերցնեն ու պատուոյ տեղը կը հրամցնեն։

Այսպէս ցեցեր և բարոյական վիժուածքներ չէին մնալ անպատիժ, եթէ մեր հասարակութիւնը կենդանի լինէր, եթէ նա պատիւ, զգացմունք և ազգային արժանապատուութիւն ունենար, եթէ նա ազդուէր մամուլի սթափեցնող խօսքերից։ Երէկ «Միտք»-ում կարդացինք, որ նման մի շէնք, ամբողջ մի անառականոց—Թադամաս, Եպոնիայում ժողովուրդը հրդեհի է մատնել։ Իսկ մեզանում լոկ անկիւններում խօսել գիտեն։ Եթէ մենք էլ պատուազգաց, գիտակից և իսկական քրիստոնեայ բարոյական մարդիկ լինինք, ապա կանանց վաճառմամբ զբաղուող այսպիսի սրիկայ—տականքների ոչ որևէ շրջանում կընդունենք, ոչ կթողնենք եկեղեցի մըտնի. ոչ նրա կնունքը կանենք և ոչ էլ պսակ ու թաղումը, ոչ տուն կտրամադրենք անառականոցի համար այդպիսի խայտառակ թշուառականների և արդէն այն ժամանակ այդպիսի վայրի, ստոր տիպերի խելքը կգայ գլուխները։ Այդպիսիներին իբրև մարմնապէս և հոգեպէս բորոտների, որոնց մենք միշտ տեսնում ենք Մարաղից դուրս, կամուրջներում և այլ տեղերում, պէտք է վանդել միանգամայն մարդկային շրջաններից և ընակութիւններից և կտեսնենք, որ ոչ օք այլ ևս չի համարձակուի տնատակ տալ հասարակական բարոյական սրբազան զգացումները։ «Միտք»-ի № 15-ի «Մեր բարոյական մթնոլորտը» վերնագրով յոդուածը դրդում է մեզ առաւել ևս զինուել ժողովրդասպան այս մեծ հիմնարկու-

թեան դէմ և պահանջել հասարակութեան ամենաեռանդուն, կորուկ և շուտափոյթ դատաստանը Մարաղայի այս նոր Վասակի դէմ։

Արդեօք այսքանից յետոյ Էլի անտարբեր կմնայ Մարաղան։

Սակայն անտարբեր չի մնայ կարծում ենք գրգռուած թուրք ժողովուրդը։ Նա՞ թոյլ չի տայ և ամենայն հիրաւմամբ, որ իր «Մամ Զատայ» մեծ ու նուիրական մէջլիդի կողքին մի ընկած ու անպիտան «հայ»ատիթ սեղծի՝ պոռանոց բացի և անարգել նրա սրբավայրը, ուր նա գօրանի սրբազան աղօթքներ է վերառաքում Մեծ Ալլահին։

Գոնէ թուրքերի մօտ միայն մերայդ պատիւն էր մնացել։ Այդ էլ ոտնատակ տուեց մի գարշելի և անխտաժէտ հայ, վարկաբեկով Մարաղի ողջ հայութիւնը։

—Հայը, տուում էին թուրքերը երբեմն, սուտ չի խօսի, ազնիւ է վաճառականութեան մէջ և բարոյական։

Այո, էր երբեմն... Ափսոս այդ ժամանակները...

Բայց եթէ կայ մի բան որ միայն հայի յատկանիշն է դառել, դա ստախօսութիւնն է, կեղծիքն է, և գողութիւնը վաճառականութեան մէջ։ Սոսնձ այստեղ թէ քանի խալվարից են ամբարը՛յնում... Սակայն թողնենք այդ։ Մեր՝ գողութեան հաւասարեցրած վաճառականութեան վրայ՝ աւելացաւ և պոռապահութիւնը, ասոր փեշակը։ Ամօթ մեզ։ Մենք դարձել ենք թուրքերի ծաղր ու ծանակի առարկան։

Բոյքոթ Վասակ և ազգախայտառակ այս վատ հային և նրա անառականոցին։ Ահա Մարաղի փրկութիւնը և պատուի վերադարձը։

ՀԷՆ-ՅՈՒԵ

---

1 Դեկտեմբեր Ռաշտ

—

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՔԱՅԼ

(Սեփ. թղթակցից)

—

Գիլանում հայերը, աննպաստ պայմանների պատճառով, մեծ մասամբ պարապում են խմիչքի վաճառմամբ։ Երկար տարիներից ի վեր, իւրաքանչիւր օղեվաճառ իւր ընակուած՝ բակի մի մասում շինած ունէր, եթէ կարելի է այսպէս ասել, օղու հնադարեան սիստեմի մի գործարան։

Այս տարի Ռէշտի մաներ օղեվաճառ հայ խանութպանները՝ երկար տարիների փորձերից, իրար վնասելուց, չամիչ թանգացնելուց և այլն, խրատուած մտածում են որ առաջ իրենց այդ գործը կանոնաւորել. այն է աւելի արդիւնաւէտ դարձնել։ Ուստի եւ կազմում են «Գիլան» անունով կօպերատիւ մի ընկերութիւն, Ռուսաց հիւպ-ի հովանաւորութեան տակ։

Ընկ. նախնական դրամագլուխը 10000 թուման է դրուած՝ որը գոյանում 400 բաժնեգիներից, բաժնեգինը 25 թուման արժողութեամբ։ Գնուած է սեպհական գետին, որի վրայ շինում են բոլոր լրամարութիւններով օղու գործարանի շէնքը։ Շէնքը շինւում է միանգամայն չայլուող մատերիալից. որով ապահովում է երբ ևիցէ հրդեհուելուց։

Օդի և այլ խմիչքեղէն պատրաստելու գործիքները լինելու են նոր սիստեմի, որոնք շուտով կստացուին Ռուսաստանից։

Ընկ. բերել է տալու Ռուսաստանից և Եւրոպայից այն ապրանքներից, ինչ որ իւր խանութպանները պատուում են։

Այսպիսով այս տարի Ռպշտում մօտ 30 հայ տներ մաքրուում են օդի քաշելու կեղտոտութիւնից և ազատուում նրա առաջացրած վնասակար միկրոպալից, վատառոգչ, խեղդող օդից և կազմում հայ համայնական մի օրինակելի միութիւն։

Ցանկալի է Պարսկաստանի մեր բոլոր քաղաքացիները և գաւառացիները նոյնպէս կազմեն ընկերութիւններ, աւելի ապահովելու իրանց ապագայի առևտուրը քանի դեռ նոր են ստոր խոշոր կապիտալիստները մուտք գործում մեր երկիրը։

Անպայման անհրաժեշտ են օր առաջ հաւաքական ուժերով և մտածումներով նորա-նոր շահաւէտ գործեր, արդիւնաբերական ձեռնարկներ սկսել ժամանակի պահանջներին ճնշմամբ տոսխան, մեքենայական զարգացած եղանակներով, ապա թէ ոչ վաղը մի օրը ստոր շահագործողների ծառաները պիտի դառնանք և վիզներս ծռած պաշտօններ և գործ խնդրենք։

Ն.

ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻԶ

«Միտք»-ի ներկայ համարում տպւում է պարսկ. մի տպագնորդի՝ Թուրիզի թուրքերի մէջ մի պրոնոց-արհեստանոց բանալու մասին, որպէս զի մի անգամ ընդ միշտ հաւաքուին փողոցներից՝ հաքիւրներով թափառող, տկար, անօթի, անպատսպար թուրք տղայ աղջիկները. որոնք ճարահատ վարում են ամենազզիր և ամենաանպիտան մի կեանք։ Այս տուիչ հանգամանքէն պատրաստուած մի ծրագիր՝ խմբագրութեան կողմից՝ Նորին Մեծութիւն արքայազն և մեծ իշխան Իմաղլի Միրզի միջոցով ներկայացուած է գեն. նահանգ. Ջոլա-էդ-Դովլին։ Բարի հայ մարդիկ թող իրենց կողմից ևս ի գործ դնեն բարերար ազդեցութիւններ որ մարդասիրական այս մեծ գործը ի կատար ածուի։

◆ Ամսոյս 24-ին, երեքշաբթի, տա. ժամը 9-ին թեմիս առաջնորդին այցելութեան էր եկել՝ իր երկու տղաներով՝ Սովուշբուլաղի յայտնի հաճի Ղատիր Աղան։

◆ Արամեան դպրոցում նոր տարու և Ծննդեան տրձակուրդները սկսուեցին Դեկտ. 26-ից և կտևեն մինչև Յունվ. 10 ը։

◆ Այս շաբթում Սալմաստեցի տեղիս վաճառականները, Գերմանական Կայսրութեան քաղաքիս հիւպատոսական գործավար պ. Նեունէմանը և գերմ. գործարանի տեսուչը և այլք մի քանի-օրով գնացել էին Դուխարզանի կողմերը որսի։ Դուխարզանի 1000-ամեայ եկեղեցու գմբէթը խարխուլ տեսնելով՝ Սալմաստեցի մեր վաճառականները որոշելեն դրա վերանորոգութեան համար տալ 100 թուման։ Հրաւիրում ենք այդ բանի վրայ առաջնորդարանի լուրջ ուշադրութիւնը։

◆ Լիլաւի հոգաբարձութիւնը մի խնդրագրով դիմել է թեմ. խորհրդին՝ տօնել իրենց դպրոցի 30-ամեայ յոբելեանը և ազատել իրենց դրամական անելկացութիւնից...

◆ Ամսոյս 24-ի լոյս 25-ի գիշերը, առաւօտեան մօտերը կարուած և կողոպտուած է եղել ակցիոներական «Էկոնոմ» մագազինը։ Տարուած է 1500 թմնի ապրանք։ Մանրամասնութիւններ յաջորդի։

◆ Առաջիկայ տօների այցելութիւններից ազատ լինելու նպատակով պ. Մարտ. Նազարբէկեանը ուղարկել է 20 զրան Ագքատախնամի վարչութեան։ 30 զրան ևս պ. Մելքոն Աֆթանդիլեանն է զրկել։ Դր. Ասլանեանի ջանքով գանձուած է Տիկ. Վասիլ Մովսիսեանից 175 զրան լոգուտ «Ագքատախնամի»։

◆ Թուրիզի (այս ամրան) զարնանանման եղանակները սկսեցին վատանալ Դեկտ. 22-ից։ 23-ին և 25-ին ձիւն եկաւ, ձիւնի և արեգ խիստ ցուրտ։ 27-ին էլի պայծառ։

ԵՏՐԳԵՏԵՆԻՆ

Մեզ յայտնում են, որ Դուխարզանում հայոց եկեղեցուն կից մի տան մէջ բացուել է օղու գործարան (անշուշտ) մի հայի ձեռքով։ Դուրս եկած փիւչը ոսկեվաճառը թափում է եկեղեցու բակը, որի համար առևտրական երթևեկ հայերը և մանաւանդ թուրքերը խիստ զայրացած են, որ կատարւում է այդպիսի մի սրբապղծութիւն, այն էլ մի քրիստոնեայ հայի ձեռքով։ Թուրքերը ասում են, որ եթէ հայը չդադարէ եկեղեցոյ բակը կեղտոտելուց, ապա իրանք էլ պիտի կեղտ ու աղբիւս քերեն թափեն այնտեղ։ Կարծում ենք հոգևոր իշխանութիւնը կտուգանի այդ անպիտան հային և առաջը կառնի եկեղեցոյ շրջապատի ապականութեան։ Եկեղեցին ընդամենը փլչելու վրայ է։

ՊԵՐՍԿԵՏՈՅՑՆ

◆ Ռէշտից մեզ հաղորդում են, որ Դեկտ. 5-ի երեկոյից մինչև 6-ի գիշերը գրաստշունչ, հովմախառն յորդառատ անձրև եկաւ, յետոյ դադարեց և արև արեց, կարծես զարնան օրեր լինէին։ Անձրևի ժամանակ քանդուեցին պարսից մի քանի հին տներ։ Քաղաքը լի է տեղական և գիւղերից եկած հարիւրաւոր ամէկ ու ակլոր ոսվեալներով։

◆ Թէհրանի կարգադրութեամբ պէտք է մաքրուին և սալայատակուին Ռէշտի փողոցները։ Բժիշկ նահանգապետը յուրջ հետաքրքրում է այս կարևոր գործին, չնայած հայ ու թուրք ազգաբնակութիւնը, մանաւանդ հարուստները, բանգնաւոր անտարբերութիւն է ցոյց տալիս։

ԷՋԳՐԻՆ

Թերթերը հաղորդում են, որ տաճիկ կառավարութիւնն ընդունել է Ռուս-Գերման կառավարութեանց առաջարկած հայկական բէֆորմները Եւրոպ. կոնտրոլով։ Երանի՜ սա Նղբ-Տարու սիւրպրիզ չլինէր։

Խմբագիր-Հրատարակիչ՝
Ալ. Տէր-Վարդանեան
Տնօրէն՝ Միհրան Քաղդասարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԴ

Սորանով պատիւ ունիմ յայտնելու յարգելի յաճախորդներիս և ամբողջ հասարակութեան, որ պատրաստել եմ Լօնդոն մագազինի շարքում մասնաւոր շքեղ սալօն։ Ստացել եմ հազուագիւտ ածելիներ, մեքենաներ և պրիբորներ, որոնք գործածւում են մշտական դեկենֆեկցիա արած։ Զուտով գալու է Թիֆլիսից յայտնի պաղ-մասաէր Կամիրովը։ Գրիմի և դամսկի պրիշօսկաների համար ունիմ ամէն հարկաւոր գործիքներ։

Բարիկմախէր Աբրամայիս Սֆթանդիլեան

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ ԳՈՐԾԻ ՄԱՐԴԿԱՆՑ

Advertisement is the soul of business. – Ցայտարարելը գործի հոգին է— այս է Եւրոպայում և Ամերիկայում բոլոր գործի մարդկանց մօտոն, վաճառականական «հաւատամքը» և դրա համար էլ նրանք շարունակաբար գրուած են թերթերի էջերը իրանց յայտարարութիւններով։

Այս տարի ամրան քաղաքիս Ամերիկեան Հիւպատոսը հրահանգ էր ստացած Արտաքին գործոց Նախարարից պատրաստել մի ցուցակ Թուրիզում հրատարակուած բոլոր թերթերի, որպէս զի հրնարաւոր լինէր Ամերիկայի վաճառականաց և բոլոր գործի մարդկանց յայտարարել իրանց առևտրի մասին այդ թերթերում, բայց ոչ մի լրագիր էլ չէր հրատարակւում այն տեղն քաղաքում և այդ պահանջին բաւարարութիւն տալու համար մենք հիմնեցինք այստեղ Information Bureau & Advertising Agency —Տեղեկատու Բիւրո և Ցայտարարիչ գործակալութիւն՝ որի օրգան հանդիսացաւ դադարած «Միտք» շաբաթաթերթը, կրկին լոյս տեսնելով։ Մեր այս միջազգային բնոյթ ունեցող ձեռնարկը մեծապէս գնահատուեց Ամերիկայում և մենք ստացանք Առևտրական Մինիստրութիւնից— Department of Commerce-մի գրութիւն ի քաջալերութիւն մեզ՝ Բիւրոյին և թերթին՝ որոնց գոյութիւնը պաշտօնապէս ճանաչուած և յայտարարուած է բոլոր Chambre de Commerce-վաճառականական դեսեակներին Միացեալ Նահանգներում։

Արդ ցանկանալով մի մեծ և օգտակար ծառայութիւն մատուցանել մեր երկրին, մենք որոշեցինք մի բացառիկ № հրատարակել յատկապէս Ամերիկայի համար։

Սորանով յայտնում ենք յարգելի հասարակութեան, որ առաջիկայ Փետրուար ամսում այդ American Edition-ի արտասովոր համարը լոյս է տեսնելու զուտ Անգլերէն լեզուով և պարունակելու է հակիրճ տեղեկութիւններ Պարսկաստանի վաճառականութեան և արդիւնաբերութեան մասին և գործ ունեցող միտք ունեցողների հասցէները դէ յայտարարութիւնները այս պատեհ առթիւ զետեղուելու են այդ համարում։

Այս բացառիկ թռուցիկը հազարաւոր օրինակներով պիտի տարածուի ձրիաբար Միացեալ-Նահանգների ամենագլխաւոր քաղաքներում։

Ազդեր և յայտարարութիւններ կանխիկ վճարով ընդունւում են ըստ սակագնի մինչև Փետր. 15. 1914 թ.

Մենք ցանկանում ենք «Միտք»ի այս American Edition-ի միջոցով զարկ տալ Պարսկաստանի առևտրական գործերին և այդ նպատակի համար յետաձգում ենք բացառիկ թերթի հրատարակութիւնը մինչև առաջիկայ Փետրուար ամիսը, որպէսզի ամբողջ Պարսկաստանի գործի մարդիկ ժամանակ ունենան օգտուելու այս բացառիկ պատեհ թիւով իրենց յայտարարութիւնները հրատարակելու «Միտքի» այդ արտասովոր համարում։

Իմացէք, որ «Ցայտարարելը» գործի, առևտրի հոգին է, կենդանացրէք ձեր առևտրական գործերը, ընդարձակեցէք ձեր գործունէութեան տարածքը և օգտուեցէք բացառիկ պարագայից։

Միմել «Միտք»ի խմբագրութեան։